

Հրատարակվում է Հայաստանի Հանրապետության  
պետական կառավարման ակադեմիայի  
գիտական խորհրդի որոշմամբ

# ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Գ ի տ ա կ ա ն հ ա ն դ ե ս

Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Խ Ո Ր Հ Ո Ւ Ր Դ

Նախագահ՝ ՎԻԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավար

Խ ո Ր Ի Ր Ղ Ի ա ն դ ա մ ն ե Ր՝

## ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ի.գ.դ., պրոֆ.,  
ՀՀ սահմանադրական  
դատարանի նախագահ

## ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Մանկ.գ.թ., ՀՀ փոխվարչապետ

## ՀՐԱՆՈՒՅ ՀԱԿՈԲՅԱՆ

Ի.գ.դ., պրոֆ.,  
ՀՀ սփյուռքի նախարար

## ԱՐԱ ԳՅՈՒԲՅԱՆ

Տ.գ.դ., պրոֆ.

## ՄԱՆՎԵԼ ԲԱԴԱԼՅԱՆ

Տ.գ.թ., ՀՀ քաղաքացիական  
ծառայության խորհրդի  
նախագահ

## ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ

Տ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ  
ակադեմիկոս, Հայաստանի  
պետական տնտ. համալսարան

## ՄԱՐԳԱՐԻՏ ԱԶԱՐՅԱՆ

ՀՀ Նախագահի  
աշխատակազմի կադրերի  
վարչության պետ

## ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ի.գ.դ., պրոֆ., Հայկական  
պետական մանկավարժական  
համալսարան

## ԱՇՈՏ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Ի.գ.դ., պրոֆ.,  
ՀՀ սահմանադրական  
դատարանի անդամ

## ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Տ.գ.դ., պրոֆ., Երևանի  
պետական համալսարան

## ԱՐԱՍԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Տ.գ.դ., պրոֆ., Հայաստանի  
պետական տնտեսագիտական  
համալսարան

## ԷՐՈՒԱՐԴ ՕՐԴՅԱՆ

Տ.գ.դ., պրոֆ., Տնտեսագի-  
տության և կառավարման  
ինստիտուտի տնօրեն

## ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ք.գ.դ., պրոֆ., ՀՀ պետական  
կառավարման ակադեմիա

## ԳԱՐԻԿ ՔԵՌՅԱՆ

Ք.գ.դ., Երևանի պետական  
համալսարան

## ՀՐԱՆՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Հ.գ.դ., պրոֆ., Երևանի  
պետական համալսարան

## ՈՒՌԲԵՆ ԱՐՈՒՋՈՒՄՅԱՆ

Հ.գ.թ., պրոֆ., ՀՀ պետական  
կառավարման ակադեմիա

## ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ի.գ.դ., պրոֆ., Կենտրոնական  
Ասիայում ՄԱԿ-ի մարդու  
իրավունքների հանձնակատարի  
ներկայացուցիչ, Բիշկեկ,  
Ղրղզստան

## ԱԼԱՆ ՄԱՍԼՈՎ

Փ.գ.դ., պրոֆ., Կանադայի Կարլտոն  
համալսարանի հանրային քաղա-  
քականության և կառավարման  
դպրոց, Օտտավա, Կանադա

## ԼԵՍԼԻ ՓԱԼ

Փ.գ.դ., պրոֆ., Կանադայի  
Կարլտոն համալսարանի  
հանրային քաղաքականության  
և կառավարման դպրոց,  
Օտտավա, Կանադա

## ՓՈԼ ԲՐԱՈՒՆ

Փ.գ.դ., պրոֆ., Կանադայի  
Դալհաուսի համալսարանի  
պետական կառավարման  
դպրոց, Հալիֆաքս, Կանադա

## ՎԱԼԵՐԻ ԲԱԿՈՒՄԵՆԿՈ

Պետ. կառ. դոկ., պրոֆ.,  
Ուկրաինայի մունիցիպալ  
կառավարման ակադեմիա,  
Կիև, Ուկրաինա

## ՎԱԼԵՐԻ ՏԵՐՏԻՉԿԱ

Պետ. կառ. դոկ., պրոֆ.,  
Ուկրաինայի Նախագահին  
առընթեր պետական  
կառավարման ազգային  
ակադեմիա, Կիև, Ուկրաինա

## ՎԻՏԱԼԻ ՆԵԿՐԱՍՈՎ

Տ.գ.դ., պրոֆ., ՌԴ Նախագահին  
առընթեր ժողովրդական տնտե-  
սության և պետական ծառայու-  
թյան ակադեմիա, Հարավ-  
ոսաստանյան ինստիտուտ-  
մասնաճյուղ, Դոնի Ռոստով, ՌԴ

## ԻԳՈՐ ԳԱՆԶԵՐԵՆՈՎ

Ֆիզմաթ. գ.դ., պրոֆ.,  
Բելառուսի Հանրապետության  
Նախագահին առընթեր  
կառավարման ակադեմիա,  
Մինսկ, Բելառուս

## Գլխավոր խմբագիր՝ ԱՐՄԵՆ ԼՈՔՅԱՆ

Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Վ Ա Ր Չ Ա Ն Ի

ԽԱԶԱՏՈՒՐ ԲԵԶԻՐՅԱՆ (պատասխանատու քարտուղար), ԼԱՎՐԵՆՏԻ ՄԻՐՉՈՅԱՆ (խմբագիր),  
ԹԵՐԵԶԱ ԽԵԶՈՅԱՆ, ԳՐԻՇԱ ԳՍՊՈՅԱՆ, ԱՐՄԵՆ ԵԶԵԿՅԱՆ, ԱՆՆԱ ՂՈՒՇԶՅԱՆ

**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ**

---

**ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ**

*Գ ի տ ա կ ա ն հ ա ն դ ե ս*

(Հատուկ թողարկում)

**ՄԻՋԲՈՒՀԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ  
ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ**

**Մ Ա Ս 1**

**Պետական կառավարման արդյունավետության  
ապահովման հիմնախնդիրները Հայաստանի  
Հանրապետությունում**

**27-28 մարտի  
2014 թ.**

# ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## **Հանրային կառավարում 15**

### **ՎԱՂԻՆԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ..... 15

## **Տնտեսագիտություն (Կառավարում) 23**

### **ԹԱԹՈՒԼ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ**

ԳՆԱՃԻ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ  
ԿԱՌՎԱՐՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ..... 23

### **ՏԻԳՐԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԷԿՈԼՈԳԻԱՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԵՐԿՐԻ  
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԷԿՈԼՈԳՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ  
ԵՎ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ..... 41

### **ԱՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԲԻԶՆԵՍԻ ՀԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ  
ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ..... 50

### **ՏԱՐՈՆ ՎԱՐԱԶԴԱՏՅԱՆ**

ՀԱԿԱՄՐՅԱԿՅԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ  
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ..... 56

## **Իրավագիտություն 65**

### **ԼԻԼԻԹ ԱԶԱՐՅԱՆ**

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ..... 65

### **ՍԱՅԱԴ ԲԱԴԱԼՅԱՆ**

ԿԱՌՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ  
ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ  
ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ..... 75

### **ՎԱՀԱԳՆ ԴԱԼԼԱՔՅԱՆ**

ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՐՏԱՊԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ  
ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ..... 84

### **ԴԱՎԻԹ ՂԱԶԱՐՅԱՆ**

ՎԱՐՁԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌՎԱՐՄԱՆ  
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎՈՂ  
ՀԻՄՆԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔ (ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՐԻՆԱԿՈՎ)..... 93

## **Քաղաքագիտություն 104**

### **ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԳԼՈՐԱԼԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ..... 104

**ԱՐՏԱԿ ԶԱՔԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՅԻՈՆԱԼԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ..... 115

**ՄԱՐՈՒԹ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ**

ՈՂՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԱՊՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԵՎ ՈՂՔ - ՀՀ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2000-ԱՎԱՆՆԵՐԻ ԿԵՍԵՐԻՆ.....124

**ԷՂԳԱՐ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈԱԼԻՑԻԱՆԵՐԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԿԵՐՊԱՓՈԽՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀՀ ԿՈՒՍԱԿՅԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ ..... 134

**ԱՐՄԵՆԱԿ ԱՅՎԱԶՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ .....142

**ԱՐԵՎԻԿ ԴՈՎԼԱԹՔԵԿՅԱՆ**

ԷԶԵԽԻԱԿԱՆ ԽՄՔԵՐԻ ՄԱՆԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՆ..... 150

**ՌՈՒՔԵՆ ԷԼԱՄԻՐՅԱՆ**

ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ ԿԵՐՊԱՓՈԽՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՅԱՆՅԱՅԻՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՅՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ.....157

**ՆՎԱՐԴ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՏՐԻՊԱՐՏԻՋՄԸ՝ ՈՐՊԵՍ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ GR ՏԵԽՆՈԼՈԳԻԱ..... 167

**ՎԱՐՈՒԺԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ԻՆՔՆԻՇԵԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԺԵՎՈՐՈՂ ՔԱՅԱՌԻԿ ՀԱՏԿԱՆԻՇ.....174

**ՎԱՐԴԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ**

«ՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ» ԻՆՍՏԻՏՈՒՏԸ՝ ԸՍՏ ՌՈՔԵՐՏ ԴԱԼԻ..... 184

**ՄԱՄԻԿՈՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՐԳԻՆԱԼՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔ..... 190

**ՄԵՐԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ ..... 199

**ՆՈՐԱՅՐ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ**

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՄՔԸ՝ ՈՐՊԵՍ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ (ՄԻՆԳԱՊՈՒՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԸ).....209

**ՏԻԳՐԱՆ ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ԶԼՄ-Ի ԵՎ ԼՐԱԳՐՈՂԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ..... 215

**ԼԻԼԻԹ ԶԻՉՈՅԱՆ**

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆՏՐԱՆԻՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ..... 223

**ԳՈՒՐԳԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ**

ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՅՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԻՆՔՆՈՐՈՇՎԱԾ ՏԱՐԱԾՔԻ  
ԸՆԴՀԱՅՆՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ.....230

**Հոգեբանություն 238**

**ՆՈՒՆԵ ԱՂԱՍՅԱՆ**

ՑԱՆՑԱՅԻՆ ՄԱՐԿԵՏԻՆԳԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ.....238

**ՌՈՒԲԵՆ ԱՂՈՒՋՈՒՄՑՅԱՆ,  
ԵԼԵՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ**

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ ԵՐԵՎՈՒՅԹԻ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ ԱՆՁԻ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ..... 245

**ԷԼԻՆԱ ԱՍՐԻՅԱՆ**

ԱՆՁՆԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԳՈՎԱԶԴԴԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՏԱՐԲԵՐ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆ.....251

**ՀՐԱՆՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ,  
ԵԼԵՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ**

ԱՆՁԻ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՒՅՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ  
ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ..... 257

**ՍԻՐՎԱՐԴ ԲԵԶԻՐՁՅԱՆ**

ԿՈԼԵԿՏԻՎ ՏՐԱՎՄԱՆ ԵՎ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ.....263

**ԱԼԻՆԱ ԳԱԼՍՏՅԱՆ**

ԱՆՁԻ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ..... 271

**ԽԱԶԱՏՈՒՐ ԳԱՄՊԱՐՅԱՆ,  
ԳԵՎՈՐԳ ԳՅԱՐԱՔՅԱՆ**

ԱՆՁՆԱՅԻՆ ԵՎ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ՈՐՈՇ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԴԵՐԸ  
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՋ..... 277

**ՆԱՆԵ ԶԵՅՆԱԼՅԱՆ**

ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՁՆԱՅԻՆ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ..... 281

**ԱՆԻ ԽԱԶԱՏՐՅԱՆ**

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ.....289

**ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ԱՆՅՈՒՄԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՓԱԽՈՒՍՏԸ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ..... 295

**ՍԱՀԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ԱԿՏԻՎԱՅՆՈՂ ՄԵԹՈԴԻԿԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ-ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ  
ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....304

**ԱՐԹՈՒՐ ՄԻՐՉՈՅԱՆ**

ՀՈԳԵԱԽՏՈՐՈՇՄԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵՔԱՆԻ  
ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ..... 310

**ՎԱՐԴՈՒՀԻ ՊԱՊՈՅԱՆ**

ՀՈԳԵՐԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՈՒՄ ..... 318

**ԼԱՌԻՐԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

ԿԱՐԻԵՐԱՅԻՆ ԿՈՂՄԵՆՈՒՄԸ ԿՈԳԵՐԱՆԱԿԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 324

**ՄԱՐԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

ՂԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 331

**ՍՈՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ**

ԿՐԵԱՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՕԺՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇ..... 336

**ԼԻԼԻԹ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԽՆԴԻԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ ..... 342

**ՄԱՐԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՅՄԱՆ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ  
ԿԱՊՎԱԾ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՅԵՐ ..... 347

**ԴԻԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ**

ԱՆՁԻ ՀՈԳԵՐԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻԻ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԲԵՐ ՄՈՏԵՅՈՒՄՆԵՐՈՒՄ..... 353

**ԼՈՒՍԻՆԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

ԱԿՄԵԱՐԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ  
ԵՐԻՏԱՍԱՐԴ ՏԱՐԻՔՈՒՄ ..... 359

**ՎԱՀԱԳՆ ԴԱԼԼԱՔՅԱՆ**

*Երևանի պետական համալսարան,  
իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական  
դատավարության ամբիոնի ասպիրանտ*

**ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ  
ՊԱՐՏԱՊԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ  
ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ**

Քննարկվում է դատական ակտերի հարկադիր կատարման նպատակով գործադրվող իրավական ներգործության թույլատրելի միջոցների շրջանակը: Թույլատրելի են համարվում անմիջականորեն պարտավորության կատարմանն ուղղված հարկադրանքի միջոցները և կատարողական վարույթում թույլ տրված իրավախախտումների համար վարչական և քրեական պատասխանատվությունը: Պարտապանի անձի դեմ ուղղված անուղղակի հարկադրանքի միջոցները, որոնք պարտապանի իրավունքների սահմանափակման միջոցով խթանում են պարտավորության ինքնուրույն կատարումը, անթույլատրելի են:

**Հիմնաբառեր.** կատարողական վարույթ, դատական ակտի հարկադիր կատարում, հարկադրանքի միջոցներ, պարտապան:

Կատարողական վարույթի նպատակը՝ դատական ակտով սահմանված պարտավորության հարկադիր կատարումը, իրագործվում է կատարողական վարույթի առանցքային ինստիտուտը կազմող իրավական ներգործության հատուկ կառուցակարգերի՝ դատական ակտերի հարկադիր կատարման միջոցների գործադրմամբ:

Գիտական հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թե իրավական ներգործության որ միջոցներն են ներառվում հարկադիր կատարման միջոցների կազմում՝ միայն այն միջոցները, որոնք անմիջականորեն ուղղված են կատարման ենթակա ակտով սահմանված պարտավորության կատարմանը (ինչպիսիք են, օրինակ, պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը կամ պարտապանի փոխարեն նրա վրա դրված որևէ պարտականություն կատարելը), թե նաև այնպիսի միջոցները, որոնք, անմիջականորեն ուղղված չլինելով պարտավորության կատարմանը, խթանում են պարտապանին ինքնուրույն կատարելու դատական կամ կատարման ենթակա այլ ակտով իր վրա դրված պարտականությունը՝ նրա որոշակի իրավունքների սահմանափակման կամ այդպիսի սահմանափակման սպառնալիքի ուժով: Տարբեր ժամանակաշրջանների իրավական համակարգերի փորձը ճանաչում է երկրորդ խմբին

դասվող իրավական միջոցների լայն բազմազանություն՝ պարտապանի որոշակի հատուկ իրավունքների (ավտոտրանսպորտային միջոցների վարման, ձկնորսության, որսորդության) սահմանափակում, պարտապանի տեղաշարժի սահմանափակում [14, էջեր 216-223], տուգանք, ընդհուպ մինչև ազատությունից զրկում: Ընդ որում, խնդիրը ոչ թե երկրորդ խումբ միջոցների գոյության իրավաչափությունն է ընդհանրապես, այլ դրանք հարկադիր կատարման միջոցների շարքին դասելու հիմնավորվածությունը: Խնդրի կիրառական նշանակությունը հետևյալն է. արդյոք երկրորդ խումբ միջոցների կիրառումը պե՞տք է ենթարկվի հարկադիր կատարման միջոցների կիրառման ընդհանուր պայմաններին և կարգին, թե՞ դրանց կիրառումը հնարավոր է միայն առանձին իրավական ընթացակարգերի շրջանակներում:

Հարկադիր կատարման միջոցների՝ ուղղակի հարկադրանքի և անուղղակի հարկադրանքի միջոցների դասակարգումն ավանդական մոտեցում է [1, էջ 54-55]: Միաժամանակ ավանդաբար քննարկման առարկա են եղել պարտապանի կողմից իր պարտականության ինքնուրույն կատարումը խթանող՝ անուղղակի հարկադրանքի միջոցների նպատակահարմարությանը, դրանց իրավաչափության պայմաններին և կազմին առնչվող հարցերը:

Այսպես, դեռևս 1912 թ. հրատարակված աշխատությունում պրոֆեսոր Էնգելմանը քննադատում էր 1864 թ. ընդունված՝ Ռուսաստանի քաղաքացիական դատավարության կանոնագրքում հարկադիր կատարման միջոցի բացակայությունն այնպիսի դատական ակտերի պարագայում, որոնք կարող են կատարվել բացառապես անձամբ պարտապանի կողմից: Նա նշում էր, որ այդպիսի դատական ակտերը չկատարելը հանգեցնում է միայն վնասների հատուցման՝ ի հակադրություն ներկայացնելով եվրոպական առանձին երկրների իրավունքում գործող կանոնները, որոնց համաձայն՝ պարտապանը նման դեպքերում կարող էր ենթարկվել կալանքի կամ լրացուցիչ դրամական տուգանքների: Կանոնագիրքը թեև նախատեսում էր պարտապանի անձնական կալանք, սակայն այդ միջոցը կիրառելի էր միայն դրամական բռնագանձումների կատարման դեպքում: Ընդ որում, այդ միջոցն էլ վերացվել էր 1879 թ.: Այդպիսով, քննադատաբար եզրակացնում էր Էնգելմանը, ստացվում է, որ կան վճիռներ, որոնք չեն կարող հարկադրաբար ի կատար ածվել [13, էջ 694]:

Ֆրանսիացի հայտնի ցիվիլիստ Մորանդեն գրում էր 19-րդ դարի սկզբից Ֆրանսիայի դատական պրակտիկայում ձևավորված և դատարանների կողմից կիրառվող խթանող միջոցի՝ *astreintes*-ի մասին: Այն կիրառվում էր որոշակի գործողություն կատարելու պարտավորություն սահմանող դատական ակտերով, իսկ էությունը կատարման կետանցի



յուրաքանչյուր օրվա համար պարտապանից պարտատիրոջ օգտին գանձվող որոշակի դրամական գումարի բռնագանձումն է: Չնայած *astreintes*-ի մեծ արդյունավետությանը՝ Մորանոյեն միանում է դրա կիրառմանն ուղղված այն քննադատությանը, որ այդ միջոցի նշանակումն անհնար է առանց օրենքում դրա նախատեսման, քանի որ այն իրենից ներկայացնում է ոչ թե վնասների հատուցում, այլ, ըստ էության, քաղաքացիաիրավական պատիժ [6, էջ 328-332]:

Ժամանակակից իրավագիտության մեջ ևս քննարկվող հարցն արդիական է: Մասնավորապես՝ Ի. Բ. Մորոզովան և Ա. Մ. Տրեուշնիկովն առաջարկում են վերականգնել անուղղակի հարկադրանքի միջոցները՝ նշելով, որ դրանց կիրառումը դատական ակտի կատարման նկատմամբ պարտապանի անհարգալից վերաբերմունքի պայմաններում կարող է լինել միանգամայն արդյունավետ և հեշտացնել հարկադիր կատարողի խնդիրը [7, էջ 19]: Պրոֆեսոր Ի. Վ. Ռեշետնիկովան առաջարկում է անբարեխիղճ պարտապանների նկատմամբ կիրառել այնպիսի միջոցներ, ինչպիսիք են հանրային աշխատանքները, բռնագանձման ենթակա գումարի չափով տուգանքը պետբյուջեի օգտին և ազատագրվումը [9, էջ 40-41]: Իսկ Ե. Մ. Դոնցովի առաջարկը՝ գույքային որոշակի շեմը գերազանցող գումարի բռնագանձման վերաբերյալ վարույթներով հարկադիր կատարողին պահանջատիրոջ միջնորդությամբ պարտապանի գտնվելու վայրը սահմանափակելու հնարավորություն տալու վերաբերյալ [3, էջ 10], արդեն իսկ իր արտացոլումն է գտել «Կատարողական վարույթի մասին» Ռուսաստանի Դաշնության դաշնային օրենքի 67-րդ հոդվածում [15]:

Անդրադառնալով պարտապանի անձի դեմ ուղղված անուղղակի հարկադրանքի միջոցների ներդրման առաջարկներին՝ Ն. Վ. Կուրակովան անթույլատրելի է համարում այնպիսի միջոցների ներդրումը, որոնք չեն համապատասխանում ներգործության համաչափության պահանջին և իրենցից ներկայացնում են պատասխանատվության ինքնուրույն տեսակներ, ինչպիսիք են պարտապանին ազատությունից զրկելը, հանրային աշխատանքները կամ տուգանքը: Այդպիսի միջոցների կիրառումը հեղինակի կողմից հնարավոր է համարվում միայն քրեական օրենսգրքում համապատասխան հանցակազմերի նախատեսման պարագայում՝ որպես արդարադատության դեմ ուղղված հանցագործություններ: Մյուս կողմից՝ հեղինակը համաձայնվում է պարտապանից չհեռանալու մասին ստորագրություն վերցնելու միջոցի ներդրմանը՝ ընդգծելով, սակայն, որ այդպիսի միջոցը չի կարող համարվել հարկադիր կատարման առանձին միջոց [4, էջ 46-47]:

Ներկայացնելով քննարկվող հարցի վերաբերյալ մեր տեսակետը՝ նախ հարկ ենք համարում ընդգծել, որ դատական ակտով սահմանված

պարտավորության հարկադիր կատարման նպատակով պարտապանի նկատմամբ գործադրվող իրավական ներգործության որևէ միջոցի ներդրումը պետք է հիմնավորված լինի ոչ թե (ոչ միայն) այդ նպատակին ծառայելու առումով դրա արդյունավետության կամ հարկադիր կատարողի առջև դրված խնդիրների կատարումը հեշտացնելու տեսանկյունից, այլ առաջին հերթին, կիրառվող միջոցի իրավաբանական հիմնավորվածության տեսանկյունից: Խոսքը մասնավորապես կիրառվող միջոցների նյութաիրավական հիմքի մասին է. այսինքն՝ պարտապանի նկատմամբ ներգործության որևէ միջոց կիրառելը կարող է իրավաչափ լինել միայն դրա համար համապատասխան նյութաիրավական հիմքի առկայության պայմաններում: Նման համոզման հանգելու հիմքն այն իրողությունն է, որ դատական ակտով սահմանված պարտավորությունը շարունակում է լինել նյութաիրավական պարտավորություն, ինչի վկայությունն է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածը, որի համաձայն՝ պարտավորությունների ծագման հիմքերից է դատական ակտը: Իսկ այդպիսի պարտավորությունը նյութաիրավական այլ պարտավորություններից տարբերվում է բացառապես նրանով, որ սահմանված է դատական ակտով՝ այդպիսով, դատական ակտի կատարելիության հատկանիշի ուժով, ապահովված լինելով պետական հարկադրանքով: Ասվածը կիրառելի է նաև ոչ դատական այն ակտերով սահմանված պարտավորությունների նկատմամբ, որոնց պետությունն օժտել է կատարելիության հատկանիշով:

Հետևաբար դատական ակտով սահմանված պարտավորության հարկադիր կատարումն իրենից առաջին հերթին ներկայացնում է պարտավորության կատարում, այն տարբերությամբ միայն, որ կատարումն իրականացվում է պարտապանի կամքին հակառակ կամ առանց այդ կամքը հաշվի առնելու՝ հարկադրաբար: Այլ կերպ ասած՝ միակ բացասական հետևանքը, որ պարտապանի համար կարող է առաջանալ դատական ակտով սահմանված նյութաիրավական պարտավորությունը չկատարելու համար (այլ իրավախախտում չկատարելու դեպքում), այդ պարտավորության կատարումն է հարկադրաբար՝ պարտապանի կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու, ընդ որում՝ պարտապանի հաշվին (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի, հոդված 132, 3-րդ մաս): Իհարկե, դատական ակտով սահմանված պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով պարտապանը կարող է ենթարկվել նաև քաղաքացիաիրավական պատասխանատվության (ինչպես, օրինակ, վնասների հատուցման), սակայն նման պատասխանատվություն կարող է կիրառվել միայն պարտատիրոջ լրացուցիչ պահանջի դեպքում:

Դատական ակտի հարկադիր կատարման դիսպոզիտիվ բնույթն ընդգծելու և հարկադիր կատարումն առաջին հերթին որպես պարտավորության կատարում դիտարկելու օգտին են արտահայտվել մի շարք հեղինակներ [10, էջ 218], [11, էջ 80], [5, էջ 13], [2, էջ 101]: Այլ հեղինակներ, սակայն, նշում են, որ հարկադիր կատարումն իրենից ներկայացնում է ոչ թե նյութաիրավական պարտավորության, այլ միայն իշխանական լիազորություններ ունեցող մարմնի որոշման կատարում [12, էջ 98], իսկ վճռի կայացմամբ պարտապանի պարտականությունը տրանսֆորմացվում է կրկնակի պարտականության՝ պահանջատիրոջ առջև և դատարանի առջև [8, էջ 27]: Մեր կարծիքով, անընդունելի է համարել, որ պարտապանը դատական ակտով պարտականություն է ստանձնում նաև դատարանի կամ, ի դեմս դատարանի, պետության նկատմամբ: Այդ դեպքում պետք է ցույց տալ, որ պետությունը կարող է պահանջատիրոջից անկախ միջոցներ ձեռնարկել իր նկատմամբ ծագած՝ պարտապանի պարտականության կատարման նպատակով: Այնինչ նման հնարավորություն պետությունը չունի այն պարզ պատճառով, որ պարտապանի համար պետության նկատմամբ դատական ակտով որևէ պարտականություն չի ծագում:

Ի համեմատ դատական ակտով հաստատված պարտավորության կատարմանն ուղղված ուղղակի հարկադրանքի միջոցների՝ բոլորովին այլ իրավական բնույթ ունեն պարտապանի կամ այլ անձի նկատմամբ կիրառվող վարչական կամ քրեական պատասխանատվության այն միջոցները, որոնք ծագում են կատարողական վարույթի շրջանակներում առաջացած իրավահարաբերությունների արդյունքում: Մասնավորապես՝ ՀՀ օրենսդրությամբ վարչական կամ քրեական պատասխանատվություն է սահմանվում հարկադիր կատարողի գործողությունների կատարմանը խոչընդոտելու համար, արգելանքի տակ գտնվող գույքի նկատմամբ ապօրինի գործողությունների համար, պարտապանի կողմից իր գույքի հայտարարագրման պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար և այլն: Հարկադիր կատարողի իշխանական կարգադրագրերը չկատարելու համար առաջացող վարչական և քրեական պատասխանատվության այս միջոցներն անմիջականորեն ուղղված չեն դատական ակտով սահմանված պարտավորության կատարմանը և դրան նպաստում են անուղղակիորեն՝ այնքանով, որքանով հարկադիր կատարողի իշխանական կարգադրագրերն են ուղղված դատական ակտով սահմանված պարտավորության կատարմանը:

Սակայն, ինչպես արդեն վերը նշվեց, արտասահմանյան որոշ երկրների օրենսդրությունները թույլ են տալիս, իսկ առանձին իրավագետներ առաջարկում են դատական ակտի հարկադիր կատարման նպատակով

կիրառել պարտապանի նկատմամբ իրավական ներգործության այնպիսի միջոցներ, որոնք իրենցից չեն ներկայացնում ոչ անմիջականորեն պարտավորության կատարմանն ուղղված միջոցներ, ոչ էլ վարչական կամ քրեական պատասխանատվություն առանձին զանցակազմերի կամ հանցակազմերի համար: Այդպիսի միջոցները ենթադրում են պարտապանի որոշակի իրավունքների (ազատ տեղաշարժի, հատուկ իրավունքների՝ ավտոմոբիլային տրասնպորտի վարման, որսորդության, ձկնորսության և այլն) սահմանափակումներ, որոնք խթանում են պարտապանին ինքնուրույն կատարելու դատական ակտով իր վրա դրված պարտականությունը:

Ինչպես արդեն նշվեց, դատական ակտով սահմանված պարտավորությունը կամավոր չկատարելն ինքնին կարող է հանգեցնել միայն այդ պարտավորության կատարմանը հարկադրաբար և ոչ ավելին, եթե, իհարկե, պարտապանն այլ իրավախախտում թույլ չի տալիս: Ուստի նման ինքնուրույն միջոցների կիրառումը, որոնք չեն հանդիսանում ո՛չ ուղղակի հարկադրանքի միջոցներ, ո՛չ էլ վարչական կամ քրեական պատասխանատվության միջոցներ կոնկրետ իրավախախտումների համար, իրավաբանորեն հիմնավորված համարվել չի կարող, քանի որ բացակայում է դրանց կիրառման նյութաիրավական հիմքը: Այդպիսի միջոցների կիրառումն իրավաչափ կարող է համարվել բացառապես վարչական կամ քրեական պատասխանատվության տեսքով՝ այնպիսի պայմաններում, երբ նման պատասխանատվության կանոնների և ընթացակարգի պահպանմամբ ապացուցված կլինի զանցակազմի կամ հանցակազմի բոլոր տարրերի, այդ թվում՝ սուբյեկտիվ կողմի առկայությունը, երաշխիք, որից զրկված կլինի իրավունքների սահմանափակում կրող անձը, եթե այդպիսի միջոցները կիրառվեն վարչական կամ քրեական պատասխանատվության կանոնների կարգավորումից դուրս:

Այսպիսով, դատական ակտով սահմանված պարտավորության հարկադիր կատարման շրջանակներում թույլատրելի կարող են համարվել պարտապանի նկատմամբ իրավական ներգործության երկու խումբ միջոցներ. ա) միջոցներ, որոնք անմիջականորեն ուղղված են դատական ակտով սահմանված պարտավորության կատարմանը՝ պարտապանի կամքին հակառակ կամ առանց այդ կամքը հաշվի առնելու, բ) կատարողական վարույթում առաջացող իրավահարաբերություններում թույլ տրված իրավախախտումների համար վարչական կամ քրեական պա-

տասխանատվության միջոցներ, որոնք դատական ակտով սահմանված պարտավորության հարկադիր կատարման միջոց չեն և անուղակիորեն են ծառայում դատական ակտի կատարման նպատակին: Իսկ պարտապանի նկատմամբ գործադրվող այն միջոցները, որոնք միայն պարտապանին որոշակի զրկանքներ պատճառելու միջոցով ստիպում են նրան ինքնուրույն կատարել պարտավորությունը, իրավաբանորեն անթույլատրելի են, քանի որ չունեն նյութաիրավական հիմք, այն է՝ ո՛չ դատական ակտով սահմանված պարտավորությունը կամավոր չկատարելու հետևանք են (քանի որ այդպիսի հետևանք կարող է լինել միայն պարտավորության կատարումը հարկադրաբար), ո՛չ էլ մեղավորությամբ կատարված այլ իրավախախտման՝ զանցանքի կամ հանցագործության հետևանք են: Այդպիսի միջոցների կիրառման դեպքում պարտապանը զրկանքներ է կրում առանց որևէ իրավախախտում թույլ տալու, ինչն իրավաչափ չէ:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Васьковский Е. В.**, Учебник гражданского процесса. Издание 2-е. Москва, 1917.
2. **Гурвич М. А.**, Иски о принуждении. / “Ученые записки ВЮЗИ”. – Москва, 1948.
3. **Донцов Е. М.**, Исполнения судебных и иных актов в отношении имущества физических лиц, дисс....кандидата юрид. наук, Москва, 2000.
4. **Куракова Н. В.**, Исполнительное производство: обращение взыскания на имущества должника-организации, дисс. ... кандидата юрид. наук. Москва, 2004.
5. **Малеин Н. С.**, Имущественная ответственность в хозяйственных отношениях. – “Наука”, 1968.
6. **Л. Жюллио де ла Морандьер**, Гражданское право Франции. Том 2, пер. с французского, изд. Иностранной литературы, Москва, 1960.
7. **Морозова И. Б., Треушников А. М.**, Исполнительное производство. Москва, Городец, 2004.
8. **Натахина Е. Г.**, Исполнение решений арбитражных судов об имущественных взысканиях, дисс. ... кандидата юрид. наук, Москва-1999.

- 
9. **Решетникова И. В.**, Исполнительное производство за рубежом // Право и экономика. Москва, № 3, 2001.
  10. **Сергун А. К.**, Исполнение решений, обязывающих должника совершить определенные действия. Труды ВЮЗИ, Т. XVII. – Москва, 1971.
  11. **Сергун А. К.**, Принудительное исполнение судебных решений в общем процессе реализации норм права // Труды ВЮЗИ. Т. 61 – Москва, 1978.
  12. **Толстой В. С.**, Проблемы исполнения обязательств по советскому гражданскому праву. Диссерт. на соискан. ... док. юрид. наук. – Москва, 1977.
  13. **Энгельман Н.Е.** Курс гражданского судопроизводства. (Юрьев, 1912). / Гражданский процесс Хрестоматия. Под. ред. М.К. Треушникова. Москва, Городец, 2005.
  14. **Юдин А. В.**, Опыт юридической оценки «экзотических» способов исполнения судебных актов органами принудительного исполнения / Эффективность принудительного исполнения судебных решений и актов других органов, сборник материалов Международной научно-практической конференции, г. Казань, Казанский (Приволжский) федеральный университет, 8-11 июня 2011г., ответственные редакторы – А.О. Парфенчиков и Д. Х. Валеев – Москва, Статут, 2011.
  15. [http://www.consultant.ru/popular/ispolproisv/69\\_7.html#p887](http://www.consultant.ru/popular/ispolproisv/69_7.html#p887) – 23.01.2014

**ВААГН ДАЛЛАКЯН**

*Ереванский государственный университет,  
аспирант кафедры гражданского  
процесса юридического факультета*

**КРУГ ДОПУСТИМЫХ МЕР ПРИНУЖДЕНИЯ ПРИМЕНЯЕМЫХ НАД  
ДОЛЖНИКОМ С ЦЕЛЬЮ ПРИНУДИТЕЛЬНОГО ИСПОЛНЕНИЯ  
СУДЕБНЫХ АКТОВ**

Обсуждается круг допустимых мер принуждения применяемых с целью принудительного исполнения судебных актов. Допустимыми считаются меры принуждения направленные непосредственно на исполнение обязательства, а также административная и уголовная ответственность за правонарушения в исполнительном производстве. Недопустимы меры косвенного принуждения направленные против личности должника, которые понуждают должнику самому выполнить обязательство путем ограничения его прав.

**Ключевые слова:** исполнительное производство, принудительное исполнение судебного акта, меры принуждения, должник.

**VAHAGN DALLAKYAN**

*Yerevan State University,  
PhD Student of the Chair of Civil  
Procedure of the Faculty of Law*

**THE FRAME OF PERMISSIBLE MEASURES FOR ENFORCEMENT  
AGAINST DEBTOR FOR THE PURPOSE OF COMPULSORY  
ENFORCEMENT OF JUDICIAL ACTS**

The discussion is on the frame of permissible legal measures for the purpose of compulsory enforcement of judicial acts. Measures are considered permissible if enforced directly for the fulfillment of obligations as well as implementation of administrative and criminal responsibility during enforcement procedure. Indirect enforcement measures which are aimed at the limitation of debtor's rights that stimulate self-fulfillment of the obligation are considered not permissible.

**Keywords:** enforcement proceeding, compulsory enforcement of judicial act, compulsory measures, debtor.

© «Հանրային կառավարում» գիտական հանդեսի խմբագրություն

**Հիմնադիր** «ՀՀ պետական կառավարման ակադեմիա»  
**(անվանումը և** պետական ոչ առևտրային կազմակերպություն,  
**գրանցման համարը)** 264.110.05880  
**Գրանցված է՝** ՀՀ արդարադատության նախարարության  
պետական ռեգիստրում 18.09.2003 թ.,  
**Գրանցման համարը՝** 211.200.00236  
**Պետական գրանցման**  
**վկայականի համարը՝** 01Մ 000236  
**Հասցեն՝** 0028, ք. Երևան, Կիևյան 8  
**Հեռախոս՝** 010 269 259  
**Էլ. փոստ՝** journal@paara.am  
**Համացանցային հասցեն՝** www.paara.am

Չափսը՝ 70x100<sup>1/16</sup>, թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ,  
ծավալը՝ 22.9 տպ. մամուլ, տպաքանակը՝ 300:  
Տպագրվել է «Տիգրան Մեծ» տպագրատանը  
(հասցեն՝ Երևան, Արշակունյաց 2)

---

---

«Հանրային կառավարում» գիտական հանդեսն ընդգրկված է Հայաստանի  
Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ՀՀ ԲՈՀ)  
սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների  
հիմնական արդյունքների և դրոյթների հրատարակման համար ընդունելի  
պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում:

**« Պ Ե Տ Ա Կ Ա Ն Ծ Ա Ռ Ա Յ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն » Երևան**